



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Հոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի, Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«18» հունիսի 2019 թվական N 69-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2018թվականի հունվարի 10-ի թիվ 04-Ա որոշումը, Մայակովսկի համայնքի բնակիչ Հասմիկ Հարությունյանի դիմումը ֆինանսական օգնության մասին, հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը,

որոշում եմ՝

1. Մայակովսկի համայնքի 2019 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից Հասմիկ Հարությունյանին տրամադրել 35 000/ երեսունհինգ հազար/դրամ դրամական օգնություն.
2. Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՎԱԿԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ. Մայակովսկի
2019թ. հունիսի 18



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«03» հուլիսի 2019 թվական N 70-Ա

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքանների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 912-Ն որոշումների պահանջների՝ հիմք ընդունելով «Տիգրան Լևոնյան» ԱԶ-ի կողմից 2019 թվականի հունիսի 28-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Մայակովսկի համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի արտադրական օբյեկտների 1.142707 հա հողամասում « Կոտայքի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊ ընկերության կողմից ընդհանուր 481.5 քմ չափերով ինքնակամ կառուցած շինությունները՝ ճանաչել համայնքային սեփականություն:
2. Մայակովսկի համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքի Մայակովսկի-Ձորաղբյուր 1-ին փողոցի թիվ 2/15 հասցեի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի արտադրական օբյեկտների 1.142707 հա հողամասում « Կոտայքի ճանապարհների շահագործման և շինարարական» ՍՊ ընկերության կողմից ընդհանուր 481.5 քմ չափերով ինքնակամ կառուցած շինությունները ճանաչել օրինական:
3. Ինքնակամ կառույցի պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին , այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ. Մայակովսկի
2019թ. հուլիսի 3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«09» հուլիսի 2019 թվական N 71-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի,

որոշում եմ

1.Քաղաքացի Հայկ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնքում գտնվող հողամասում (կադաստրային ծածկագիր 07-043-042-013) տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ բնակելի տան և պարիսպի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ԿԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ



Գ.Մայակովսկի

2019թ.հուլիսի9